

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՈՎՏԱՄԵԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2013 Թ ԱՌԱՋԻՆ
ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի համայնքի բնակիչներ հյուրեր պարոն Ա. Այվազյան այսօր Ձեր քննարկմանն ենք ներկայացնում Հովտամեջի գյուղական համայնքի ղեկավարի, ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի 2013 թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 30 -ը կատարած աշխատանքները;

Գյուղապետարանը իր գործնեությունը իրականացնում է « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Գյուղը ունի 250 տնտեսություն, 1456 բնակչություն, 903 ընտրող, 267 հա ընդհանուր հողատարածություն, 215 գյուղատնտեսական նշանակության ոռոգելի հողեր՝ որից՝ 153 հա վարելահող, 55 հա տնամերձ հողամաս 7 հա համայնքային սեփականության հողեր; 2013 թ. գարնանը մշակվել է 164 հա, անցյալ տարվա համեմատ ավել է մշակվել 4 հա չի մշակվել 26 հա; չմշակելու հիմնական պատճառներն են սեփականատերերը բացակայում են, սեփականատերերը միջոցներ չունեն, ունեն սերմացույի և իրացման խնդիր;

Գյուղում հիմնականում մշակում են կարտոֆիլ, ցորեն և կաղամբ;

Ըստ բնագավառների կատարվել են՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումները;

Գույքահարկի գանձումը տարեկան պլանով նախատեսվել է 1828,5 հ.դ փաստացի կատարվել է 560,5 հ.դ այսինքն 43,1%: Հողի հարկը տարեկան նախատեսված է 5806,7 հ.դ փաստացի կատարվել է 203,8 դ. այսինքն 7,1 %;

Պլանով նախատեսված այլ եկամուտներ 100 հ.դ. փաստացի կատարվել է 0%

Պետության կողմից ստացված դոտացիան կատարվել է 100%

Կիսամյակային կատարողականը 69,8 %

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հովտամեջի միջնակարգ դպրոցի նախակրթարանի 1 ուսուցիչի աշխատվարձ է վճարվել 302,4 հ.դ յուրաքանչյուր ամիս 50,4 հազ դրամ

Շրջանավարտների համար կազմակերպվել է միջոցառում դպրոցը ավարտելու կապակությամբ ծախսվել է 60,0 հազ դրամ

Համայնքում 3000 ք.մ հատկացվել է որպես խաղահրապարակ բարեկարգման համար ծախսվել է 270.0 հ. դ իսկ գյուղամիջյան փողոցների կամուրջների վերանորոգման համար 370.840 հ.դ. Համայնքը ունի գրադարան 6000 կտոր գրականությունով, որը շատ լավ պահպանված է: Գրադարանից օգտվում են 20 ընթերցող, որոնք հիմնականում դպրոցականներ և ուսանողներ են:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ժամանակին էջմիածնի զինկոմիսարիատ ենք ներկայացրել համայնքի կցագրման ենթակա

պատանհներ: Մայիսի 9-ի կապակցությամբ համայնքում կազմակերպվել է միջոցառում, ծախսվել է 100,0 հազ. դրամ իսկ արցախյան պատերազմի 25 մասնակիցների տրվել է օգնություն 500.0 հ.դ. յուրաքանչյուրին 20.0 հ.դ.

զոհված ազատամարտիկների 3 ընտանիքների տրվել է օգնություն 90.0 հ.դ. յուրաքանչյուրին 30.0 հ.դ., ծաղկեպսակներ է դրվել հայրենական պատերազմի և ղարաբաղյան շարժման զոհված ազատամարտիկների հուշարձանին:

Համայնքում մահացած 7 ընտանիքների հարազատների տրվել է դրամական օգնություն յուրաքանչյուրին 30.0 հ.դ. և ծաղկեպսակներ է դրվել մահացածների շիրիմներին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Մարտի 8-ի կապակցությամբ համայնքում բնակվող 65 տարեկանը լրացած 68 կանանց տրվել է նվերներ, որի համար ծախսվել է 238.0 հազ. դրամ.

Սոցիալապես անապահով 2 ընտանիքի որպես օգնություն տրվել է 130.0 հ.դ.

Համայնքում նոր ծնված 6 երեխաների ընտանիքների տրվել է դրամական օգնություն 180.0 հ.դ. յուրաքանչյուրին 30.0 հ.դ., նոր ամուսնացած 1 զույգերի տրվել է 30.0 հ.դ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հունվարի 1-ի տասնօրյակում կազմակերպվել է անասնազվիսաքանակի համատարած հաշվառման աշխատանքներ և արդյունքները ներկայացվել է վիճակագրական ծառայություն: հաշվառվել և վիճակագրական վարչություն է ներկայացվել ցանքերի հուլիսյան հաշվետվության 4 ԳՏ ձևը: Վերանորոգվել և մաքրվել է ոռոգման ներտնտեսային ցանցի ջրամատակարարումը, որը ապահովում է տնամերձ հողամասերը:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Գարնանը մաքրվել է գյուղամիջյան ճանապարհի երկու կողմի առունները: Կատարվել է աղբաթափություն շաբաթը մեկ անգամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Խմելու ջրագծերի վերանորոգում
2. Էլեկտրոլարերի մաշակում

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՍԱՐԳՍՅԱՆ